Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Ի պատասխան № TIIG-13 «Գյուղատնտեսական նշանակության մեքենա-սարքավորումների մատակարարում Ակունք, Գեղամասար, Կապան, Մեծավան, Ալավերդի համայնքների համար» մրցույթի վերաբերյալ 06.07.2020թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

1. Հարց՝ Որակավորմանն ուղղված պահանջներում 2.1 կետում նշված է, որ Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն առ այն, որ ունի առնվազն երեք (3) տարվա (2017-2019) փորձ նմանատիպ ապրանքների մատակարարման մեջ և նմանատիպ ապրանքների հաջողությամբ ավարտված նվազագույնը երկու (2) պայմանագիր (հատուկ սարքավորումներ և փոխադրամիջոցներ) վերջին երեք տարիների (2017-2019) ընթացքում:
   Խնդրում եմ տալ պարզաբանում, թե որո՞նք են համարվում հատուկ սարքավորումներ և փոխադրամջոցներ, և արդյո՞ք դա ներառում է, օրինակ՝ մարդատար մեքենաները թե, ոչ:

Պատասխան՝ Հատուկ սարքավորումներն այն մեխանիզմների համալիր են, որոնք օգտագործվում են կոնկրետ խնդիրների լուծման համար: Հատուկ սարքավորումները լայնորեն օգտագործվում են տարբեր բնագավառներում՝

- Շինարարական հատուկ տեխնիկա (գրեյդեր, բուլդոզեր, էքսկավատոր)
- Գյուղատնտեսական տեխնիկա (կոմբայն, խոտհնձիչ, ինքնաթափ)
- Ճանապարհաշինական հատուկ տեխնիկա (գրեյդեր, գլդոն)
- Ավտոմոբիլային հատուկ տրանսպորտային միջոցներ (նախատեսված են ոչ ստանդարտ ապրանքների տեղափոխման համար)
- Կոմունալ նշանակության հատուկ տեխնիկա (ձյուն մաքրող տեխնիկա, տեխ. օգնության մեքենա)

2. Հարց՝ Խնդրում եմ տալ պարզաբանում, հայտերի ներկայացման փուլում, որպես հայտի ապահովում հանդիսանում է միայն հայտի ապահովման հայտարարագի՞րը: Եթե այո կրու՞մ է այն որևէ ֆինանսական բնույթ, կամ ու՞նի որոշակի (առաջարկվող գնի որևէ տոկոս) ֆինանսական ներդրման պահանջ:

Պատասխան՝ Հայտի ապահովման հայտարարգիրն անհրաժեշտ է ներկայացնել համաձայն մրցութային փաթեթի «Հայտի ապահովման հայտարարագիր» ձևաթղթի:

Հարգանքով,

Ռոզա Դանիելյան
№ TIIG-13 մրցույթի քարտուղար
ՀՏԶՀ

10 հուլիսի 2020թ.